ՍԱՐԱՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ և ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՂԵԿԱՎԱՐ՝ ՔՈԼԱՅԱՆ ԱՐԵՎՀԱՏ

ԵՂԵԳՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……. 3

2. ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ և ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ….. 5

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……15

4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգում ապագա մասնագետների կայացման համար կարևոր դեր են խաղում մասնագիտության մեջ ինքնորոշումը, մասնագետների և աշխատաշուկայի պահանջարկի համապատասխանությունը, ինչին հնարավոր է հասնել հոգեբանամանկավարժական աջակցմամբ և ուղղորդմամբ: Այսօր առավել կարևոր է ապագա մասնագիտության համար ինքնորոշումը սեփական անձի հնարավորությունների և կարողությունների գիտակցման ճանապարհով, ոչ թե մասնագիտական կողմնորոշում՝ դրանց գնահատման միջոցով: Այս առումով կարևորում ենք հոգեբանական աջակցումն ու խթանումը ավելի վաղ՝ դեռահասության տարիքում, ինչը հնարավոր է իրականացնել համապատասխան տեղեկատվության լայնածավալ կիրառմամբ և դեռահասների շրջանում հոգեբանական ինքնաճանաչման, ինքնագիտակցման ձևավորման և զարգացման ճանապարհով: Դեռահասի պատկերացումներն ու երազանքները որոշակի համակրանք, կամ նույնիսկ հրապուրաքն են ձևավորում կոնկրետ մասնագիտության հանդեպ, իսկ արդեն պատանեկան տարիքում դրանք նախահիմք են դառնում արժեհամակարգի համար: Հանրակրթական հաստատություններն այսօր նոր պահանջներ են առաջացնում ապագա երիտասարդների համար:: Մասնագիտական ինքնորոշումը ապահովում է որոշակի պատրաստվածություն ապագա մասնագիտության ընտրության համար: Ապագա մասնագետի մեջ պետք է ձևավորել ինքնուրույնությունը: Ինքնուրույնության համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում: Մանկության տարիներին ազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, հետևել նրա ընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել

պատասխանատվություն կրել սեփական ընտրության համար: Ավելի ուշ, դպրոցական տարիքում առավել կարևորվում է գիտելիքը, իմացությունը, ինչը թելադրվում է մեծի կողմից, և այս առումով ինքնուրույնության խթանումը զուգահեռ դժվար է իրականացնել: Սեփական անձի հետաքրքրությունների և ապագա մասնագիտության սկզբնական ինքնորոշման քայլերը կարող են իրականանալ վաղ դեռահասության տարիքում: Եթե տեղեկացվածությունը, մասնագիտությունների մասին պատկերացումները բավարար լինեն ինքնորոշման համար, ապա ուսումնական հաստատություններում սովորողները կարող են կայացնել որոշում՝ որպես ապագա մասնագետ:

ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ և ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սովորողների մեջ կարևոր բնավորության գծեր՝ որպես անհատ և սուբյեկտ ուսման գործընթացում հանդես են գալիս ինքնուրույնությունը, իր ուժերում վստահ լինելը, պատասխանատվությունը և այլն: Իհարկե ցանկալի է, որ այս որակական հատկանիշները հանդես գան համատեղ, ոչ թե լինեն վերացական, այլ խմբավորված: Եվ իհարկե նման դրական հատկանիշները պետք է ակտիվ օգտագործել ուսման ընթացքում:

Ցանկացած գիտելիք համարվում է մեռած, եթե սովորոցի մեջ չի զարգանում նախաձեռնողականությունը և ինքնուրույնությունը. աշակերտին պետք է սովորեցնել ոչ միայն մտածել, այլ նաև ցանկություն սովորելու հանդեպ:

Իհարկե աշակերտները շատ տարբեր են, և տարբեր են նրանց մոտեցումները ուսման հանդեպ: Այս առումով կարելի է առանձնացնել հիմնական երկու տեսակ՝ ակտիվ և պասիվ երեխաներ: Գենետիկորեն իրենց էությամբ ակտիվ աշակերտները ցուցաբերում են բնավորության հետևյալ գծերը. համառություն, նպատակասլացություն, ինքնակառավարման զարգացվածություն, ինքնավստահություն, ինքնուրույն աշխատելու պատրաստակամություն: Պասիվ երեխաները հաիմնականում տարբերվում են նրանով, որ չունեն վերոնշյալ բնավորության գծերը, հիմնականում կախվածություն ունեն դասավանդող ուսուցչից, կենտրոնացած են մյուսների հուշումների ու խորհուրդների վրա: Այստեղ մեծ դեր է խաղում դասավանդող ուսուցչի հաջող գործունեությունը, հակառակ դեպքում ոչ մի արդյունք չի գրանցվի: Նմանատիպ երեխաների հետ նույնպես լինում է հաջող համագործակցություն՝ պարբերաբար խորհուրդներ, ցուցումներ, հուշումներ տալով, ինչը չի գործում ակտիվ երեխաների դեպքում: Վերջիններիս մոտ հակառակ գործընթացն է ընթանում. հետևանքները լինում են բացասական, սկսում է հետ զարգանալ ամենակարևոր որակական հատկանիշը՝ ինքնուրույնությունը:

Ռուս գիտնական Կորյակովցեվան կրթական ասպարեզում ակտիվ գործունեություն ցուցաբերողներին տվել է հետևյալ բնութագիրը, որ

նրանք մտածված իրենց ունակություններով կարող են իրականացնել հաջողված ուսումնական գործունեություն, կարող են շուտ կողմնորոշվել, տալ իրենց գնահատականը, կուտակել արդյունավետ փորձ, կարող են ստեղծագործական և համախմբված մեծ ցուցանիշներ ցույց տալ մյուս անհատների հետ ուսումնական գործընթացում համագործակցելիս: Իրենց վրա կրում են մեծ պատասխանատվություն գործընթացի ամբողջ ընթացքում մինչև վերջնարդյունքին հասնելը:

Դասապրոցեսի ընթացքում ուսուցիչը պետք է աշակերտին սովորեցնի իր վրա պատասխանատվություն կրելու զգացումը ուսման գործընթացում, նպատակադրվելը և հետևողական լինելը: Առաջադրանքը, խնդիրը լուծելիս պետք է կենտրոնանալ երեխայի ինքնակողմնորոշման և ինքնազարգացման վրա: Աշակերտը արդյունքին հասնելու համար պետք է փորձի բոլոր հնարավոր տարբերակները, լինի համառ ու նպատակասլաց, կարողանա կառավարել գործի ընթացքը: Սա կտա այն արդյունքը, որ երեխան կդառնա անկախ ու ինքնուրույն: Պարբերաբար, սիստեմատիկ աշխատանքը բերում է միանշանակ դրական արդյունքի. երեխայի մեջ ձևավորվում է աշխատասիրություն: Ուսուցիչը ստանձնում է ուղղորդողի դերը, ձևավորելով երեխայի մեջ հոգեբանական դիրքորոշում՝ գիտակցաբար պլանավորել և կարգավորել իր ուսումնական գործընթացը, փորձարկել և կառավարել տարբեր հնարավոր մեթոդներ, փոխկապակցել նոր ստացած գիտելիքները հնի հետ, կարողանալ հետևել սեփական ուսման պրոցեսին, կարողանալ վերլուծել ենթագիտակցությունը, գիտահետազոտական վերլուծություններ անել, կարողանալ վերափոխել, կառավարել ձեռք բերած գիտելիքները, տիրապետել հստակ ձևավորված և լայնամաշտաբ ինֆորմացիայի:

Իհարկե, ամեն ինչի հիմքում ընկած է, ամենակարևորը, գիտելիքների մեծ պաշար ձեռք բերելը, սակայն, տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում և քսանմեկերորդ դարի պահանջներին զուգահեռ փոխվել է նաև նոր սերնդի պահանջմունքներն ու հետաքրքրությունները: Եվ այժմ, ուսուցչի

գործը կայանում է նրանում՝ կենտրոնանալ առաջին հերթին ոչ թե գիտելիքների, այլ անձի ստեղծագործական մտքի և ալտերնատիվ եղանակով նոր ինֆորմացիա փոխանցելու վրա:

Նորագույն կրթության առաջնային ձեռքբերումներից մեկը **հասարակությունն** է, որտեղ կրթության ամենակարևոր նպատակը անձի ձևավորման և զարգացման ուղությունն է, նրա հոգեբանական, սոցիալական, կենցաղային ցանկություններն ու պահանջները բավարարելն է:

Նորագույն կրթական համակարգում անձը դիտարկվում է որպես ակտիվ սուբյեկտ ուսման գործընթացում, վառ գործող ապացույցը նրա ինքնուրույն ու անկախ գործունեությունն է: Անձի վրա կենտրոնանալու գաղափարը մի շարք գիտնականների համոզմամբ տալիս է իր ակնհայտ արդյունքը ձևավորելով մի շարք արժեքներ, որոնք են նոր արժեքների ձևավորում, ընտրության հնարավորություն, ինքնակառավարում, ինքնուրույնություն, պատասխանատվություն:

Հենց անձի վրա կենտրոնանալու գաղափարն է թույլ տալիս բավարարել նոր սերնդի պահանջմունքները, սերմանելով այն գաղափարը, որ հասարակությունը կարողանա ինքնուրույն որոշում կայացնել, ակտիվ գործունեություն ցուցաբերի, արագ հարմարվի կյանքի փոփոխվող պայմաններին: Այսպիսով, կրթական մի նոր մոտեցում է ձևավորվում, որի հիմքում ընկած է անձի ինքնակատարելագործման, ինքնակրթման գործընթացը:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունում կարևոր է փոխադարձ հարաբերությունն ու սերտ կապը: Ձևավորել աշակերտի մեջ ինքնուրույնության որակական հատկանիշը՝ չի նշանակում, որ նա պետք է կատարի տնային հանձնարարությունները միայնակ, սա մի որակական հատկանիշ է, որը իր մեջ պարունակում է հոգեբանական, սոցիալական և անձնական տարրեր: Սիստեմատիկ աշխատանքի արդյունքում երեխայի մեջ ձևավորվում, մարզվում և զարգանում են որակական հետևյալ հատկանիշները. պատասխանատվություն և պարտավորվածություն հանձնարարված աշխատանքը կատարելու հանդեպ, ժամանակահատվածը արդյունաետ օգտագործելու հմտություն, ինքնագնահատականի բարձրացում:

Սովորողների մեջ հատկապես պետք է ուշադրություն դարձնել և սերմանել հաջողակ դառնալու ձկտումը և հեռացնել վախը դեպի անհաջողությունը միտքը: Առավել ևս հաջողակ դառնալու ձկտումը երեխային տալիս է արդյունավետ, դրական արդյունքներ: Ինչքան մեծ է հաջողակ դառնալու ձկտումը, այնքան երեխան վարում է ակտիվ և կենսունակ կյանք:

Անհաջողության բախվելու վախը բացասաբար է ազդում երեխայի հոգեբանության վրա: Երեխան հաջողության ձկտման փոխարեն վախենում է ճանապարհին հանդիպող դժվարություններից, պատժվելուց, խուսափում է տհաճ բախումներից, և դեռ ոչինչ չարած՝ արդեն վախի զգացողությունն է պատում սպասվելիք անհաջողությանը բախվելու հանդեպ:

Սովորաբար հաջողության ձկտող երեխաները բնավորությամբ ավելի ակտիվ են, ճարպիկ, կենսուրախ, ինչը չի դրսևորվում այն երեխաների մոտ, ովքեր վախ են դրսևորում անհաջողության բախվելուց: Վերջիններս ինքնամփոփ են, խուսափում են դժվարություններից, հիմնականում իրենց առաջ դնում են պարզ խնդիրներ և փորձում լուծել: այս երկու տեսակի սոցիալական շերտին մենք բախվում ենք, իսկ խնդիրն այնքան բարդ է, որ փորձել դա շտկել պահանջվում է բավական մեծ ժամանակ և ջանքեր, քանի որ այս բնավորության գծերը գալիս են գենետիկորեն: Այսինքն փորձել լուծել մի խնդիր, որը սերտաճած է մարդու մեջ, բավական մեծ ջանք է պահանջում:

Մի գիտական հետազոտություն ցույց է տվել, որ երեխաների առաջ դրված խնդիրը,

որի լուծման համար եղել է սահմանափակ ժամանակ, ցույց է տվել, որ լուծում

չստացած խնդիրն ավելի է տպավորվել երեխաների մեջ և երկար ժամանակ հիշվել է նրանց կողմից, քան լուծված խնդիրը: Արդյունքում ի՞նչ է ստացվել: Թվացյալ պարտությունն էլ ավելի է երեխաներին մոտեցրել հաջողության հասնելու ձկտմանը, իսկ սահմանափակ ժամանակը ծառայել է ավելի արագ ու արդյունավետ աշխատելուն: Երեխաները սովորել են՝ փորձելով տեղավորվել ժամանակի մեջ, մտածել ավելի արագ, ճկուն և շուտ հասնել արդյունքին: Այսինքն,

բավականին բարդ առաջադրանքներ լուծելիս, ինչպես նաև սեղմ ժամկետը բարձրացնում է աշխատանքի արդյունավետությունը: Սա շատ արդյունավետ մեթոդ է խմբակային աշխատանքներում, որտեղ ընդգրկվում են բոլորը և ամեն մեկն ունի իր որոշակի պարտականություններն ու այն գիտակցումը, որ խմբի հաջողությունը ինչ որ չափով կախված է իրենից: Իսկ այս ամենը արդյունավետ կազմակերպելու ու իրականացնելու համար մեզ անհրաժերտ են փորձառու և նպատակասլաց մասնագետներ, որոնք իրենց ողջ ուժերը, գիտելիքներն ու հմտությունները կներառեն արդյունքին հասնելու համար:

Ուսուցիչը դպրոցում հասարակության ներկայացուցիչն է: Եվ այն պարզ գաղափարը, որ նա կրթում է ապագա մասնագետին անհատապես՝ տալով այս գործընթքացին մեծ կարևորություն, ակնհայտ արդյունք ցույց կտա:

Աշխարհը շատ արագ է զարգանում, իսկ նոր սերնդի պահանջմունքներն ու հետաքրքրությունները զարգացմանը զուգահեռ փոխվում են: Մենք չենք կարող պատկերացնել, թե ինչ կուզի վաղվա երեխան: Ոչ մի սերունդ նման չի նախորդին, չնայած նրան, որ մասնագիտությունները չեն փոխվում. մեզ պետք են նույն քիմիկոսներն ու ֆիզիկոսները, բժիշկներն ու հրշեջները, խոհարարներն ու մեքենավարները:

Իհարկե ուսուցչի դերը շատ մեծ է անհատի ձևավորման գործում, բայց սա կախված չէ միայն նրանից: Երեխան ինքը պետք է ինքնուրույնության հասնելու համար գիտակցի ու ինքնքնադաստիարակվի, ունենա մեծ ցանկություն կատարելագործվելու, գործի մեջ հավատա իր ուժերին ու հուսա, որ կհասնի հաջողության: Պետք է հետաքրքրություն ցուցաբերի այն ամենի հանդեպ, ինչով որ զբաղվում է: Երբեկ չպետք է հանձնարարության կեսից թուլացնի իր ուժերն ու հանձնվի՝ պատճառներ փնտրելով, այլ պետք է փորձի բոլոր հնարավոր մեթոդները և ամեն դեպքում հաղթահարի դժվարությունը: Երեխայի նպատակասլացությունն ու համառությունը խթան են հանդիսանում նպատակին հասնելու համար: Խնդիրը լուծելիս ուժեղ կամքի տեր երեխաների մոտ սահմանափակ ժամանակը տեմպն արագացնում է,

իսկ մյուսների մոտ ստեղծում է ավելորդ լարվածություն և դժվարություն: Պետք է երեխային սերմանել այն հոգեբանությունը, որ բարդ խնդրի առաջ կանգնելիս հետաքրքրությունը ավելի մեծանա, պայքարող տեսակ ձևավորվի: Պետք է նախորոք ծրագրի իր ապագան, ունենա ձկտում իրագործելու բոլոր նպատակներն և մեծացնի աշխատասիրությունն ու էլ ավելի բարդ խնդիրներ հաղթահարի:

Այստեղ հարկ է նշել, որ շատ կարևոր եմն երեխայի նախասիրություններն ու հետաքրքրությունները, որոնք կարևոր դեր են խաղում նրա ձևավորման ու կայացման գործում: Եթե ծնողներ, բարեկամները, ուսուցիչը փորջեն իրենց կարծիքը պարտադրել երեխային, նրանք կարող են ոչ միայն հոգեբանորեն բացասաբար ազդել, այլ նաև ծանր հետևանքներ թողնել երեխայի հետագա կյանքի վրա: Մայրիկն իր երաժիշտ դառնալու չիրականացած երազանքը բարդում է դստեր վրա, այն դեպքում

երբ երեխան իր կյանքը չի պատկերացնում առանց մաթեմատիկայի, իսկ հայրիկն իր երեխային տեսնում է միայն բժշկի դերում, այն դեպքում, երբ փոքրիկը լավ ասմունքող է, սիրում է պարեր և ի ծնե օժտված է դերասանական վարպետությամբ:

Շատ կարևոր է բացահայտել երեխայի ցանկություններն ու նախասիրությունները, առաջնորդվել դրանցով, իսկ ծնող-ուսուցիչ համագործակցությունը կտա էլ ավելի լավ արդյունք: Իսկ նախասիրությունները բացահայտելու համար մշակվել է հատուկ հարցաշարեր, որոնց պարզ՝ <<այո>>, կամ <<ոչ>> պատասխանները լիովին բավական են ճանաչելու համար մեր փոքրիկներին:

Նմանատիպ տեստի օրինակ հետևյալն է.

- Սկսում եմ աշխատանքս, հույսս դնելով հաջողության վրա
- Գործում ցուցաբերում եմ ակտիվություն
- Հաճախ մի ծայրահեղությունից մյուս ծայրահեղությունն եմ ընտրում. կամ շատ հեշտ կամ շատ դժվար խնդիրներ
- Դժվարություններ հանդիպելիս չեմ խուսափում, այլ գտնում եմ հաղթահարելու եղանակներ
- Ցուցաբերում եմ համառություն նպատակին հասնելու համար

- Նախաձեռնություն եմ ցուցաբերում
- Եթե վտանգի եմ ենթարկվում, ապա խելքով ոչ թե անիմաստ
- Այդքան էլ համառ չեմ, հատկապես երբ ինքնակառավարումը բացակայում է

  Եվ նմանատիպ տեստ, որը կբացահայտի երեխայի հոգեբանական վիճակն ու տրամադրվածությունը:

  Երեխաների կրթման և դաստիարակության հարցում պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով. գիտելիքը ամենակարևոր հարստությունն է, պետք է լինել համբերատար, և աշխատասեր արդյունքին հասնելու համար:

  Աշխատանքը նպատակ է հետապնդում նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, հարաբերությունների ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն: Ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումները, քանի որ հին մեթոդները այլևս չեն տալիս արդյունք: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը:

  Բանալի բառեր՝ կրթական համակարգ, համագործակցային ուսուցում, ուսումնառություն, փոխկապվածություն, պատասխանատվություն, հաղորդակցում, կարծիքների փոխանակում, մեկնաբանություն: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝ դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը, բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը, ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը: Համագործակցային ուսուցման տարրերն հիմնականում հինգն են. դրական փոխկախվածություն, դեմ առ դեմ փոխազդեցություն, անհատական հաշվետվություն և պատասխանատվություն, միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ, խմբային գործընթացի մշակում:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է

ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժևորման համար, ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը: Դասի կազմակերպման

ժամանակ ուսուցչի հիմանական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել: Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ:

Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Շատ են պատահում դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում: Առաջադրանքը, մեթոդը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին:

Փոքր խմբերով աշխատելու առավելությունները: Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Չորս հոգանոց

խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի

մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից: Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է , որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին: Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձևերի կիրառումը: Երբ ուսուցիչն աշխատում է մեծ խմբի հետ, ապա աշակերտները արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են:

Այսօր հանրակրթական դպրոցների մեծ մասում դասարանների խտությունը անցնում է 20-25 (որոշ տեղերում՝ 30-34): Ոչ բոլոր դպրոցներն ունեն համապատասխան կահավորում և պայմաններ: Դասարաններում չկան շարժական սեղաններ, խմբային աշխատանքի համար նախատեսված պարագաներ, կապի առկայություն, տեսացրիչ, էլեկտրոնային գրատախտակ և այլն: Ուստի առաջարկում ենք պատմության դասերին 20 և ավելի աշակերտ ունեցող դասարաններում կիրառել «Շրջվիր դեպի զույգդ» մեթոդը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս խուսափել դասաժամին ավելորդ աղմուկից, տեղաշարժից և խառնաշփոթից: Աշխատանքային դիրքը

լինում է՝ «աչք աչքի», «երես երեսի»: Դեմ առ դեմ գտնվողները կարողանում են հեշտությամբ տեսնել և լսել մեկը մյուսին: Հաղորդակցումը կատարվում է խոսքով, աչքերով: Այստեղ կարևոր է աշակերտներին դիմել պատահական ընտրությամբ՝ հնարավորություն տալով նրանց ներկայացնելու իրենց պատասխանները ամեն քննարկումից հետո: Նման անհատական պատասխանատվությունը ավելի զգոն է դարձնում զույգին, և աշակերտներն ավելի լրջությամբ են մոտենում առաջադրանքին և ստուգում միմյանց՝ համոզվելու համար, թե արդյո՞ք երկուսն էլ պատրաստ են պատասխանելու, թե ոչ: Այս մեթոդը ուսուցչին հնարավորություն է տալիս անարգել շրջել դասարանում, տալ անհատական հրահանգներ և առանձին մոտեցում ցուցաբերել խմբերին: Այս ժամանակ աշխատանքային աղմուկը կառավարելի է, իսկ աշխատանքային խմբերը չեն խանգարում իրար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններն անհրաժեշտ են խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Ուսումնական պրոցեսը պետք է անցնի ուսուցիչ-աշակերտ սերտ համագործակցության պայմաններում: Պետք է բոլոր աշակերտների թիմային ներգրավվածությունը, իսկ մշակված նոր մեթոդների շնորհիվ հետաքրքրությունը դեպի առարկան էլ ավելի կմեծանա ու ակնհայտ արդյունքներ կտա: Այստեղ շատ կարևոր է անհատական մոտեցումը. Ուսուցիչը պետք է երեխաներին ճանաչի անհատապես, իմանա նրանց առավելություններն ու թերությունները, դասապրոցեսի ընթացքում արդյունավետ օգտագործի նրանց ունակությունները, իհարկե նաև պետք է հաշվի առնել միջավայրը որտեղից դուրս է գալիս երեխան, արդյունքում ցուցաբերել հմուտ և ինդիվիդուալ մոտեցում:

Կյանքը միշտ ստիպում է հասարակությանը ինքնակատարելագործվելու համար նոր ուղիներ փնտրել: Բոլոր ժամանակներում դաստիարակությանն ու անձի ձևավորմանը մեծ դեր ու նշանակություն է տրվել: Ժամանակները փոխվում են, փոխվում են նաև մեթոդները, անփոփոխ է մնում միայն նպատակը՝ երեխային կրթել, դաստիարակել և կատարելագործել ժամանակի չափանիշներին համապատասխան, և վերջապես, դարձնել հասարակության լիիրավ անդամ: Անկախ այն հանգամանքից, ինչ միջավայրում է ձևավորվում երեխան, ուսուցչի դերը շատ մեծ է նրա կյանքում, և եթե իր մոտեցմամբ ուսուցիչը կարողանա հասնել այն արդյունքին, որ երեխան կյանքին նայի իր աչքերով, այլ տեսանկյունից, ապա ուսուցիչը կհասնի իր ջանքերի գերագույն արդյունքին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Диагностика мотивации успеха и боязни неудачи / Фетискин Н.П., Козлов В. В., Мануйлов
2. Климов Е. А., Психология профессионального самоопределения. Ростов н/Д, 1996
3. Мильман В. Э., Метод изучения мотивационной сферы личности / Практикум по психодиагностике. Психодиагностика мотивации и саморегуляции. – М., 1990. – С. 23-43
4. Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ (գործնական հոգեբանություն): ուսումնամեթոդական ձեռնարկ / Ս. Վ. Հովհաննիսյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2014. – 332 էջ
5. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ:
6. Խաչատրյան Ս.Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախաշավիղ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ», 64 էջ: